Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
մայիսի 11-ի N 735 - Ն որոշման

«Հավելված N 1
ՀՀ կառավարության 2007 թվականի
օգոստոսի 30-ի N 1093 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ, ՎԵՐԱԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են կարանտին բուսասանիտարական հսկման ենթակա ապրանքների արտահանման և վերաարտահանման բուսասանիտարական հավաստագրերի տրամադրման կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Արտահանման և վերաարտահանման բուսասանիտարական հավաստագրերը հավաստում են կարանտին բուսասանիտարական հսկման ենթակա ապրանքների համապատասխանությունն ստացող երկրների կարանտին բուսասանիտարական պահանջներին:

3. Արտահանման և վերաարտահանման բուսասանիտարական հավաստագրերը տրամադրվում են Մնդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կողմից:

4. Արտահանման և վերաարտահանման բուսասանիտարական հավաստագրերը տրամադրվում են Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի «Եվրասիական տնտեսական միությունում բույսերի կարանտինի ապահովման մասին» N 318 որոշմամբ սահմանված բուսասանիտարական հսկման ենթակա ապրանքների ցանկին և ներմուծող երկրների պահանջներին համապատասխան:

5. Արտահանման և վերաարտահանման բուսասանիտարական հավաստագրերի տրամադրման մերժումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով:

II. ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

6. Բուսասանիտարական հավաստագիր ստանալու համար տեսչական մարմնին ներկայացվում է հայտ, որտեղ նշվում են՝

1) արտահանող կամ Եվրասիական տնտեսական միության անդամ երկիր փոխադրող անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը և գտնվելու վայրը.

2) արտադրող (աճեցնող, փաթեթավորող, պահեստավորող) անձի անունը, ազգանունը և բնակության վայրը, իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը և գտնվելու վայրը.

3) ներմուծող կամ ստացող երկրի անվանումը.

4) ստացող անձի անունը, ազգանունը և բնակության վայրը, իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը և գտնվելու վայրը.

5) արտահանվող կարանտին բուսասանիտարական հսկման ենթակա ապրանքների անվանումները և քանակությունը.

6) ստացման վայրը.

7) բեռնաթափման վայրը:

7. Տեսչական մարմինը հայտն ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում անցկացնում է արտահանման կամ Եվրասիական տնտեսական միության անդամ երկիր փոխադրման ներկայացվող ապրանքների կարանտին բուսասանիտարական զննում և ստացող երկրի կարանտին բուսասանիտա-րական պահանջներին դրանց համապատասխանության դեպքում տալիս է բուսասանիտարական հավաստագիր՝ համաձայն սույն որոշման N 4 հավելվածի:

8. Եթե զննման արդյունքում կարանտին բուսասանիտարական հսկման ենթակա ապրանքի մակերեսին կամ փաթեթավորման մեջ հայտնաբերվում են

այնպիսի օրգանիզմներ, որոնց մուտքն արգելված է ստացող երկրի կողմից, կամ այդ օրգանիզմներին իրենց մորֆոլոգիական հատկանիշներով նման վնասակար օրգանիզմներ, կամ բույսերի հիվանդությունների ախտանիշներ, կամ կարանտին վնասակար օրգանիզմների կողմից վնասվածության նշաններ, ապա բուսասանի-տարական հավաստագիր չի տրվում, կատարվում է բեռից նմուշառում և ներկայացվում լաբորատոր փորձաքննության:

9. Եթե լաբորատոր փորձաքննության արդյունքում հաստատվում է բեռում ստացող երկրի կողմից մուտքն արգելված վնասակար օրգանիզմի (օրգանիզմների) առկայությունը, ապա բեռի արտահանումը կամ Եվրասիական տնտեսական միության անդամ երկիր փոխադրումն արգելվում է՝ բուսասանիտարական հավաստագրի տրամադրման մերժման միջոցով:

10. Բուսասանիտարական հավաստագրի տրամադրումը մերժվում է նաև ստացող երկրների հատուկ պահանջներին բեռի չհամապատասխանելու դեպքում:

11. Եթե լաբորատոր փորձաքննության արդյունքում հաստատվում է, որ բեռում առկա չեն այնպիսի վնասակար օրգանիզմներ, որոնց մուտքն ստացող երկրում արգելված է, ապա տրամադրվում է արտահանման բուսասանի-տարական հավաստագիր:

12. Սույն կարգի 6-րդ կետով սահմանված հայտը ներկայացվում և 11-րդ կետով սահմանված բուսասանիտարական հավաստագիրը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան էլեկտրոնային հարթակում (www.trade.gov.am) հասանելի «Թույլատվական փաստաթղթեր» (www.sw.gov.am) համակարգի միջոցով, բացառությամբ անհաղթահարելի ուժի առկայության, ինչպես նաև արտահանվող երկրներ թղթային եղանակով ներկայացնելու անհրաժեշտության դեպքերի:

13. Արտահանման բուսասանիտարական հավաստագիրը կարող է տրամադրվել նաև արտահանողի կամ Եվրասիական տնտեսական միության անդամ երկիր փոխադրողի կողմից ներկայացված արտահանվող կամ Եվրասիական տնտեսական միության անդամ երկիր փոխադրվող բեռի վերաբերյալ բուսասանիտարական անձնագրի հիման վրա: Տվյալ դեպքում

սահմանային հսկիչ կետի տեսուչն արտահանվող կամ Եվրասիական տնտեսական միության անդամ երկիր փոխադրվող բեռի խմբաքանակը նույնականացնում է ներկայացված բուսասանիտարական անձնագրի հետ և հավաստում, որ բուսասանիտարական անձնագիրը տրված է ներկայացված տվյալ խմբաքանակի համար:

14. Բուսասանիտարական հավաստագիրն առձեռն՝ թղթային եղանակով (անհաղթահարելի ուժի առկայության, ինչպես նաև արտահանվող երկրներ թղթային եղանակով ներկայացնելու անհրաժեշտության դեպքում) տրամադրելիս՝ կազմվում է 3 օրինակից, որոնցից բնօրինակը ծառայում է որպես արտահանվող կամ Եվրասիական տնտեսական միության անդամ երկիր փոխադրվող կարանտին բուսասանիտարական հսկման ենթակա ապրանքները մինչև նշանակման վայրն ուղեկցող փաստաթուղթ, մեկ օրինակը մնում է սահմանային մաքսային մարմնում, մյուսը պահվում է Տեսչական մարմնում:

III. ՎԵՐԱԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

15. Վերաարտահանման բուսասանիտարական հավաստագիրը տրամադրվում է ներմուծված կամ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրից փոխադրված կարանտին բուսասանիտարական հսկման ենթակա ապրանքները մեկ այլ երկիր արտահանելու դեպքում, եթե դրանք բավարարում են ստացող երկրի բուսասանիտարական պահանջներին:

16. Վերաարտահանման բուսասանիտարական հավաստագրի տրամադրումն իրականացվում է արտահանման բուսասանիտարական հավաստագրի տրամադրման կարգին համապատասխան:

17. Վերաարտահանման բուսասանիտարական հավաստագիրը տրամադրվում է նաև այն դեպքերում, եթե վերաարտահանվող կարանտին բուսասանիտարական հսկման ենթակա ապրանքները՝

1) պահեստավորված են.

2) մասնատված են.

3) համակցված են այլ բեռների հետ.

4) վերափաթեթավորված են:

18. Վերաարտահանման բուսասանիտարական հավաստագիրը տրամադրվում է համաձայն սույն որոշման N 5 հավելվածի:

19. Արտահանող երկրի կողմից տրված բուսասանիտարական հավաստագիրը կամ դրա՝ սահմանված կարգով վավերացված պատճենը (ստացող երկրի համաձայնության դեպքում) ծառայում է որպես վերաարտահանվող կարանտին բուսասանիտարական հսկման ենթակա ապրանքներն ուղեկցող փաստաթուղթ:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

16.05.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ